




ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿԻ ՄԱՍԻՆ

...Մկրտիչ կաթողիկոս Խրիմյան կվախճաներ 87 տարեկան և 7 ամսական, 6 օր միայն պակաս, ձեռնադրութենեն 53, և եպիսկոպոսութենեն 39 տարին լրացուցած, կաթողիկոսական ընտրութենեն 15 տարի 5 ամիս, իսկ օծումեն 14 տարի 1 ամիս ապրած: Բարձրահասակ, անձնյա, վեճ դեմքով և առողջ կազմով անձ մըն էր Խրիմյան. բնությամբ զվարթ, պարագայից հարմարող, ոչ ձախորդությամբ ընկճվող և ոչ հաջողությամբ ճոխացող, արտաքնահարդար ձևերե հեռու, փառքի երևույթները անարգող, միշտ ծպտուն և կատակախոս, հմտությամբ ազգային շրջանակի մեջ հարուստ, տոսպական ավյունով երգիչ մը, որ մինչև վերջի ատեններ խոսող մը ու գրող մը մնաց իմաստալից գյուտերով և գրավիչ ոճով: Ահա Խրիմյանը յուր անհատական նկարագիրին մեջ:

...Եթե ազգային ժամանակակից պատմությունը առեղծվածական դեմք մը կընդունի, և հին դեմքերու հանգիստակ անբացատրելի անձնավորության մը գոյությանը կհավանի, այն ալ Մկրտիչ Խրիմյանն է անշուշտ, պաշտելի դարձած յուր Հայրիկ մակդիր կոչմամբ, ինչպես իրոք ալ այսօր յուր գերեզմանը իբրև ուխտատեղի կպատվի Կաթողիկե Մայրատաճարին մուտքին առջև:

...Խրիմյանի զարգացումն ու հմտությունը միակողմանի էր, լոկ հայերենով սահմանափակված, միջազգային և օտարազգի տարրերով ճոխացած չէր, գործի ճաշակ և չափակցյալ համեմատություն չէր ճանչնար, վարչական հանճարը պակաս ըլլալու չափ քիչ էր, հեռատես և նախատես զգուշավորությունը յուր առաքելքը չէր, հանդարտ նախապատրաստությամբ և կշռադատությամբ ձեռնարկները իրեն տվոյթական չէին: Բայց ուներ բնածին ուշիմություն մը, որ իր ըմ-

բռնելու և հիշելու և որոշելու կարողությունը կկազմեր. ուներ բնատուր ճարտարություն մը, որով ամեն պարագայե անվնաս դուրս ելլելու կերպը կգտներ. ուներ գրավիչ ոճ մը և ազդեցիկ խոսք մը, որով գիտեր սիրտերու վրա տիրապետել. և ամենուն վրա ուներ անկեղծ և ուղիղ զգացում մը, որ ամեն թերություն կլրացներ, ավրվածը կշիններ, ծուռը կշտկեր, և որևէ պակասություն կծածկեր: Ահա նկարագիր մը, որ եթե կատարյալ պատկեր չէ, բավարար սովերագիծ մըն է Խրիմյանի առեղծվածային դեմքին գաղափարը տվող: Առեղծվածային ըսինք և կրկրկենք, թե իսկապես այսպես է անձ մը, որ մեծ գործեր արտադրած չէ, որ ետևեն մեծ հետք մը թողած չէ, որ պաշտոններուն մեջ ընդհանրապես հաջողած չէ, որ դիտողությանց և սոցառնաց ներքև ալ ինկած է, և տակավին անբասիր մնացած է, համակրություն կորուսած չէ, և համարձակածայն գովեստներով հիշատակված է: Հետք մը թողած չէ ըսինք խորքերնիս իրական եղելությանց պարունակին մեջ ամփոփելով, ապա թե ոչ զգացմանց շրջանակին մեջ, ինքն գտիչն ու ստեղծիչն եղած է ազգասիրական և հայրենասիրական զգացումներուն, որոնցմով ազգը տոգորվեցավ հիսուն-վաթսուն տարիներե ի վեր, և որ պատահական զեղծումներու բացառությամբ, մոր կյանք ներշնչեց, մոր գործունեություն ազդեց, և մոր առավելություն բերավ հայ տարրին վրա: Խրիմյան Մկրտիչ այդ զգացումը շնչեց ու տարածեց ազգային պարունակին մեջ...:

ՄԱՂԱՔԻԱ ԱՌՔԵՊ. ՕՐՄԱՆՅԱՆ

(«Ազգապատում», մասն երրորդ, Երուսաղեմ, 1927, էջ 5331—5332, 5333—5334, 5334—5335)

[illegible][illegible]

...the ... of ... and ...

2. I have been working in a different people's house since we moved here with a really good family. They are very kind and I have learned a lot from them. I have also learned a lot from the people who work in the same house as I do. I have also learned a lot from the people who work in the same house as I do. I have also learned a lot from the people who work in the same house as I do.

There is another beautiful property of democracy by which history illustrates
itself in a more dramatic manner than in any other form of government.
It is the fact that in a democracy, every citizen is equally entitled to
participate in the government of the state, and every citizen is equally
entitled to the same rights and privileges as every other citizen.

[illegible]

1. The first question is to determine the probability of a particular outcome. This is done by dividing the number of favorable outcomes by the total number of possible outcomes. For example, if we have a fair six-sided die, the probability of rolling a 3 is $\frac{1}{6}$.

4. *Phyllanthus* sp. (Euphorbiaceae) - Small tree or shrub, 10-15 m tall, with a thick, woody trunk and a dense canopy of small, green, ovate leaves. The fruit is a small, round, reddish-brown capsule.

...the

... ..
... ..
... ..

1. The first step is to identify the problem or question that needs to be answered. This involves understanding the context and the specific requirements of the task.

The speaker further comments the speaker has not yet been able to

1. The first step in the process of identifying a problem is to determine the nature of the problem. This involves a thorough understanding of the situation and the people involved. It is important to gather all relevant information and to consider the perspectives of all stakeholders. Once the nature of the problem is understood, the next step is to identify the causes of the problem. This involves a careful analysis of the situation and the people involved. It is important to consider all possible causes and to identify the most likely ones. Once the causes of the problem are identified, the next step is to develop a plan to address the problem. This involves setting clear goals and objectives and determining the steps that need to be taken to achieve them. It is important to involve all stakeholders in the planning process and to ensure that the plan is realistic and achievable. Finally, the last step in the process is to implement the plan and to monitor the progress. This involves putting the plan into action and keeping track of the results. It is important to be flexible and to make adjustments as needed. Once the problem has been solved, it is important to evaluate the results and to learn from the experience. This involves reflecting on what worked well and what could have been done better. The final step in the process is to share the results with others and to learn from their experiences. This involves presenting the results to the group and discussing the lessons learned. It is important to be open and honest and to listen to the feedback of others. By following these steps, you can effectively identify and solve problems in your group.

(Faint, illegible handwritten notes)

[illegible][illegible]

[Faint handwritten notes at the bottom of the page]

[illegible]

[Faint, illegible handwriting]

The members of the public attending the first night meeting were of different ages and
 both sexes. Some of the persons present were of the name of the public meeting. The
 first of the persons present was the name of the public meeting. The first of the persons
 present was the name of the public meeting. The first of the persons present was the name
 of the public meeting. The first of the persons present was the name of the public meeting.

Big - helped to move up the list to include the police. It got publicity through getting a newspaper photograph of the police in a jail. The newspaper reported that the police were in a jail.

Die 1. Sammlung / ist eine vollständige Darstellung der gesamten Geschichte des Landes
von der Zeit der ersten Ansiedlung bis zur Gegenwart und enthält alle wichtigen Ereignisse
und Thaten der Vergangenheit.

...the ... of ...

...the
... ..
... ..
... ..
... ..
... ..

[illegible][illegible]

1875

[illegible]

Handwritten signature

Հայ կրթական հիմնարկության այդ կարելիքը ձեռնարկով, զոր ամեն գնահատումն էլ կհամարվի, կհավատանք, թե «Հայոց Հայրիկ»-ին ցիրուցան հատորներով լույս տեսած գործերը միության մը վերածվելով, հայ հանճարի մը ճառագայթումը մշտնջենականորեն նվիրական պարտականությունը կը կատարվի, անկորուստ պահպանելու այդ գրական թանկագին նշխարները, և անոնց մով վերապրեցնելու համար մեծ հովիվը իր ժողովուրդին մեջ:

Գուցե ոմանք տակավին կանուխ նկատեն «Խրիմյան»-ը վերապրեցնելու պետքը, քանի որ անոր հասարակաց հմայքը դեռ չէ ջրնջված այն կուրծքերեն, որ անոր շունչովը բաբախեցին. ու դեռ ապրող սերունդ մը կա մեր մեջ, որ անոր կյանքն ու գործերը կը պատվե կենդանի պաշտումով մը, դեռ վարագաթն Արծիվին թոփչը կհաճի մեր մըթնոյրտին մեջ, իր լուսավոր ստվերը դեռ քածված չէ մեր արևեն, դեռ իր ձայնն ու հառաչանքները, իր երգերն ու պատգամները չեն մարած, չեն մոռցված:

Սակայն ժամանակը, ամերիկահայ գաղութին մեջ մանավանդ, գուցե օր մը ավելի առաջ անտեսել տա մեր իրականությունը կենսագործող ամենեն արդյունալից կյանքերն անգամ քան այլոք, ցորչափ ընկուզիք քաղաքակրթության մը պահանջները հետըզհետե թոնաման հայ ճակատագրին, ցեղին ու լեզվին, պատմության ու հավատքին վրա: Այս լուռ սպառնալիքին դեմ ի՞նչ ավելի գորել, ի՞նչ ավելի փրկարար դեր մը կրնա ստանձնել Հայ կրթական հիմնարկությունը, քան այն նվիրումը, որով իր շուրջը շնչող նոր սերունդին և հետնորդներուն համար քարոյապես կգոտեպնդվի, որպեսզի անոնք չմոռնան իրենց մայրենի լեզուն, չմոռնալու համար Սահակեն մինչև Խրիմյան, Վարդանեն մինչև Անդրանիկ խորաքանդակ դրոշմված տոհմային պատմության կարկառուն էջերը: Այս չքնաղ նախահոգության տենչանքը, որով զգացված է Հայ կրթական հիմնարկությունը, մեր համոզումին ու հավանության բոլոր ուժովը կդրվատենք, ու կհրավիրենք ամեն հայ անհատ, որ իրավունք համարի ազգին մեծ մարդերովը պարծելու, հրավիրենք, ա՛յո, որ կարոա մեր կյանքի տեսաբանության նոր Սամվելը, մեր իմաստության Սիրաքը, մեր ողբերուն Երեմիան, մեր ընտանեկան դրախտին ավետարանիչը, մեր հայ թողնկներուն մեծահավատ Պապիկը, ազդվելու անոր հրահանգիչ և հայրենանվեր խոսքերեն:

Հայրիկի գրվածները, թեև գրական արվեստի հրապույրը չունեն, սակայն չենք կրնար ուրանալ, թե անոնք իրենց պարզ, բայց խորունկ արտահայտություններուն մեջ կախաճեն բնական ու սրտատույզ գեղեցկություն մը: Մանավանդ որ մեր ամոթխած ու հայրենաբաղձ բարքերուն նկարագիրը, զոր հայրական ջերմ զգացումներով ու կիրթ փորձառությամբ կավանդե մեզի, դասեր են, որոնք չեն կրնար իբրև դողանջուն բախել մեր ականջները, այնքա՛ն հնչուն է և թըրթրոուն Հայրիկի սրտին վրդովեցուցիչ զանգակին պղինձը: Մեր կյանքին գիրքը պիտի կարդանք իրմով, իր մեջ ծրարված անցյալ մը վերհիշելու համար ի պատիվ մեր ցեղին:

ԵՂԻԾԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԴՈՒՐՅԱՆ

(Հայ կրթական հիմնարկության քարտուղարին ուղղված նամակից: Տե՛ս «Ամբողջական երկեր Խրիմյան Հայրիկի», Նյու-Յորք, 1929 թ.)

*
* *

Հայոց Հայրիկ, նորօրինակ այս պատարագիչը, Գաղափարի և Վերածնության անգուգական այս քարոզիչը, Հայաստանյայց խաչված Նահատակի հաղորդությամբ, կը ներշնչեք հույսը՝ Հայկական Ազատագրության և Հարության:

ԳՍՐԵԳԻՆ ԵՊԻՍԿՍՍՈՍ ՏՐԱՊԵՉՈՆՅԻ

*
* *

Հայոց Հայրիկը ողջ է դեռ: Մեռավ 1907-ին, բայց կապի ու պիտի ապրի ան, որքան ատեն որ հայ ազգը կապի: Սիրտը անմահ է: Ու Հայոց Հայրիկը ազգին համար սիրուն է դեռ, և պիտի մնա, ըլլա ցվերջ:

Հայոց Հայրիկը ի՛մ ալ հայրիկս է: Իր դեմքը միշտ աչացս առջև է: Իր կենդանագրին տակ իր ձեռքովն իսկ գրված ստորագրությունը կա: Թանկագին ստացվածքս է այդ կենդանագիրը, որ շրջանակված է գրատան պատին վրա: Դիմացի պատին վրա ալ Բրիտանի պատկերը կախված կպահեն: Այս երկուքը նույն աստվածային սերը կհոսեցնեն իրենց աչքերեն, իմ ալ վրաս: Ու իմ ալ սիրտը ազգիս համար՝ կուռի, կհորդի այդ երկու սրտերուն գետեն հոսող սիրո անվերջ հոսանքովը: Պարծանքս միայն այն է, որ մեկն ալ ես ինքս եմ Հայրիկին զավակներեն, առարկա, արժանի թե անարժան, անոր սրտին ջերմ սիրույն:

Ա. Ա. ՊԵՏԻԿՅԱՆ



ՀԱՅԿԱՅԻՆ ԵՊԱՐԿՈՍՈՍ ԵՄՄԱՆՈՒԷԼ ԲԱՐՍԵՂՅԱՆԻ ԾԱԾԿՈՒ
 Մարտի 5/18 1871 թվականին ծնունդ է առնում 26 Մարտի 1871 թվականին

Խրիմյանը յուր կյանքում շատ անգամ մեծ գումարներ ձեռք ձգեց, բայց նա մնաց միշտ պարտքերի տակ խլոված: Խրիմյանը խիստ անփութ էր դեպի յուր անձնական վայելչությունը, դեպի յուր բարեկեցությունը. նա յուր վրա ոչինչ չէր վատնում, իսկ բնավորությամբ, եթե կարելի է այդպես կոչել, կոմունիստ էր: Նա որպես անհաշիվ կերպով ստանում էր, նույնպես անհաշիվ կերպով սպառում էր: Հանդիպած աղքատին Խրիմյանը պատրաստ էր յուր վերջին փարան տալ և ինքը սոված մնալ: Սեփականությունը նրա համար ոչինչ նշանակություն չուներ, երբ նա ծառայում էր ընդհանուրի օգտին: Խրիմյանը չէր ծնված բարձր կոչման համար, որ պատրիարքական Աթոռի վերափոխեցներ յուր կյանքը և ձեռքը, որ սովոր էր մուգաների շնորհած քնարը հնչեցնել, պարսպեցներ քաղաքական և կրոնական ժողովների վճիռները ստորագրելով:

Խրիմյանը հոգով բանաստեղծ է, իսկ սրբոտով առաքյալ: Նա հիշեցնում է մեզ հինգերորդ դարու անձնուրաց աբեղաներին, որք հոգևոր զինվորության ցուպը ձեռքներին կրած, հուրի և սուրի միջից անցնելով պըտտում էին Հայաստանում, որսում, գիտություն և կրոնք էին տարածում:

Խրիմյանի պատրիարքության չորս տարին անցավ խիստ անգույն կերպով: Նա մի երևելի բան չարդունաբերեց, որովհետև նա կառավարչական մարդ չէր: Այլ խոսքով նա ուսած չէր դիպլոմատիկական խորամանկ ձևերը, որով հմուտ քաղաքագետը պտտեցնում է յուր նեղգավոր մեքենան:

ՐԱՖՖԻ

(«Մշակ», Թիֆլիս, 1873 թ., № 49)

...Նա հայտնվում է հայության որպես վասալական մի համեստ վանքի համեստ վանահայր: Համեստ իր սովորություններով, բարք ու վարքով, նիստ ու կացով, մարդկանց հետ պարզ վարմունքով, բայց անասելի հանդուգն, որպես գաղափարի համար մարտնչող, որպես մոլեռանդ պաշտող մարդկային մտքի...: Երջանիկ մարդ. նա անկեղծ կերպով հավատում է մտքի փրկարար, անհաղթելի ազդեցությանը, անպայման հավատում է խոսքի ուժին...:

...Եվ Խրիմյանը մնում է ֆանատիկոս, գաղափարամոլ, յուր ամբողջ կյանքի ընթացքում մինչև յոթանասուներկու տարեկան հասակը: Միայն այդ տեսակ համոզվածները կարող են ժողովրդական մարդիկ լինել, դրա

մեջն է Խրիմյանի ժողովրդական մարդ լինելու գաղտնիքը:

...Սեր դեպի մարդկություն, ուրեմն և սեր դեպի յուր ազգը, հավատ դեպի արդար մտքի ուժը. ահա այդ ժողովրդական մարդու նշանաբանը:

...Խրիմյանը օպտիմիստ է, լավատես է այդ բանի բուն քրիստոնեական մտքով. նրա համար չկան վատ մարդիկ աշխարհի երեսին, այլ կան միայն մոլորված մարդիկ...: Նա միշտ անհիշաչար է..., համատ է յուր մտքերի, յուր գաղափարների, յուր դավանած սկզբունքների մեջ: Նա մագի չափ չի շեղվի իր սկզբունքներից... մի քարյա պուն, որին ոչ հողմը, ոչ էլ մորիկը չեն կարող շարժել յուր ամուր պատվանդանից:

Մանուկ և հսկա, հեզ և վիթխարի. ահա Խրիմյանի պատկերը: Հավատալ խոսքի ուժին, հավատալ մտքի անհաղթելի ազդեցությանը, հավատալ ճշմարտության, քրիստոնեական գաղափարի վերջնական հաղթությանը. ահա Մկրտիչ Խրիմյանի նշանաբանը, նրա հավատի դավանանքը:

...Որպես իդեալիստ նրա հավատը անսպասելի է, որպես բուն քրիստոնեական հովիվ,—նրա պարտաճանաչության զգացմունքը, նրա հոգացողությունը, յուր հոգևոր հոտի մասին՝ անասման է...:

ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

(«Մշակ», Թիֆլիս, 1892 թ., № 23)

* *

...Հայրենիքի սերը: Դրա նյութն ունեի ես: Բայց մի բարեպատեհ հանգամանք պետք էր, որ վառվեր ու բորբոքվեր: Խրիմյան Հայրիկը մի երկնային շանթով վառեց իմ մեջ այդ նյութը:

Հայրիկի քարոզը ես առաջին անգամ լսեցի Մեղրանի ս. Գևորգ եկեղեցում (Թիֆլիս): Կանգնած էի առջևի կարգումը: Դեռ չէի տեսել Հայրիկի պատկերը: Երբոր բարձրացավ բեմի վրա, դեռևս ոչինչ չխոսեցած, սուկ այդ հայացքը իմ վրա մի չլսված տպավորություն գործեց: Մեծն Ներսես, Սահակ Պարթև, Մեսրոպ վայրկենապես պատկերացան երևակայությանս մեջ իբր կենդանացած և առջև կանգնած: Սիրտս լեցվեց, բուկս խեղդվեց, բայց ամենայն ուժով զսպեցի ինձ և տեղս ու տեղս չորբեցի, գլուխս դրի գետնին, երկու ձեռքիս մեջ և խեղդված հեկեկաբեղով հորդ արտասուք թափեցի: Նա սկսեց խոսել, բայց ես չէի իմանում ոչինչ, իմ հոգին իր բոլոր զգացումներով թռել էր Հայաստան: Ահա այս ծամանակից իմ առաջվան ցավերի վրա ավելացավ և այս ցավը և ինձ համար անբուժելի դարձավ: Աստվածասիրություն, հայրենասիրություն և ու-

սումնասիրություն երրորդության պես միաց-
յալ ուժով տիրեցին իմ ամբողջ բնությունը.
այլևս ուրիշ զգացումների տեղի չտվին: Աշ-
խարհային փառք, պատիվ, վայելչություն
բոլորովին ոչնչացան ինձ համար:

ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԱՆ

(«Իմ կյանքի գլխավոր դեպքերը»,
Թիֆլիս, 1894 թ.)

* *

Երանի՜ւ՝ հայ ազգին—հալումաշ հայ ազ-
գին, որ յուր ներկա վիճակում դեռ ունի յուր
մեջ այնքան բարոյական ուժ, այնքան կեն-
սական գործություն, որ այսօր համարձակ
կարող է մարդկային պատմությանն առա-
ջարկել յուր կրծքին սնուցած Հայրիկի պես
մի մեծ անձնավորության անուն: Մի՛ անուն,
որի հետ միշտ սերտ կապված է եղել լուստ,
ազգային հառաջադիմության սուրբ գործը.
մի՛ անուն, որի առաջ խորին ակնածությամբ
գլուխ է խոնարհում հինգ միլիոնի չափ ժո-
ղովուրդ. մի՛ անուն, որ յուր բարոյական
վիթխարի մեծությամբ և անհաղթելի ուժով
տիրապետել է մի ամբողջ ազգի սրտին ու
հոգուն. վերջապես, մի՛ անուն, որից այնքան
հայրական խնամք, գորո՛ւվ ու գգվա՛նք է
վայելել միլիոնավոր հայ ժողովուրդը տասն-
յակ տարիների ընթացքում...

Եվ ահա այդ խնկելի անձն այսօր Ամե-
նայն Հայոց կաթողիկոս է:

«Վասպուրականի Արծիվը», որ հին Սիո-
նի բարձունքից միայն գողտրիկ երազներումն
էր թոչուտ դեպի Մայր-Երասխի ափունքը,
դեպի նվիրական Այրարատը, այսօր վերջա-
պես Նա արթուն աչքով, լույս ցերեկով պա-
ռավ դեպի նոր Սիոն, դեպի յուր կարոտած
Մասիսը: Հզոր թևերով Նա ճեղքեց ամպերը,
անցավ ծով ու ցամաք, լեռներ ու դաշտեր—
և ահա հեռադետ ու լուսահայաց ճախրում է
Էջմիածնի սրբավայրերում, սավառնում է
լուսավորչաշեն տաճարի խաչապսակ գմբե-
թի շուրջը:

Մի՛ սիրտ, որ բազում տարիներ տանջը-
վում, տառապում էր ազգի ցավերով. մի՛
սիրտ, որի խորքերում ազգը կանգնել էր
յուր դարևոր հայրենասիրության, յուր դարե-
վոր րոճերի նվիրական սեղանը—այդ մեծ
սիրտն այսօր ուժգին տրոփում է Լուսավոր-
չի լուսազարդ գահի վրա:

Եվ ազգն աննկարագրելի գնձությամբ,
հոգեհարար զգացումներով տոնեց յուր Հայ-
րիկի հարապետությունը, յուր կյանքի այդ
մեծախորհուրդ րուպեն, այդ մեծահանդես
տոնը:

Այդ տոնը հասարակ տոն չէր...

Հազարավո՛ր հույներով, հազարավո՛ր ա-
լընկալություններով նա հուզում էր հինգ

միլիոնաչափ հայ ժողովրդի սիրտն ու հոգին:
Այդ տոնն իսկապես մի փառավոր հաղ-
թանակի տոն էր:

Հաղթանակ, որ տարավ Հայրիկի մեջ
մարմնացած բարոյական վեհությունն ու
հառաջադիմական գաղափարը, Հայրիկի մեջ
վառվող հայրենամեկեր լայն ոգին, Հայրիկի
կրծքում եռացող ժողովրդասիրական ան-
կե՛ղծ, անհուն զգացումները:

Եվ գառամյա՛լ ազգը վերստին ույժ առած,
վերստին զվարթացած, ասեն մի կայտառ
մանուկ, վխտաց ու ցնձաց, որ վերջապես
պսակվեցին նրա հույսերը, և բանաստեղծի
ասած, «առաքելաշաղկոհ փեսա գնաց մոր-
մունքների ընդունարան Էջմիածինը»:
Գնա՛ց, բազմե՛ց Լուսավորչի այրիացյալ գա-
հի վրա, վերացրեց սգո քողը, ցրվե՛ց երկ-
բայության մոայլը... Սակայն ազգի ցնձու-
թյունը հարյուրապատկվում և հազարա-
պատկվում է, երբ տեսնում է, որ այդ «առա-
քելաշաղկոհ փեսան» յուր խնկելի Հայրիկն է,
երբ մտածում է, որ այդ գահի վրայից այսու-
հետև պիտի լսե ու տեսնե կենդանի խոսք
կենդանի գործի հետ, պիտի լսե սիրո, ուս-
ման և նոր կյանքի նոր քարոզ: Իրա՛վ է, ե-
ղել են նույն ազգի կյանքում րուպեներ, երբ
Լուսավորչի Աթոռից դարձյալ վերացվել է
սգո քողը, հայրապետական գահին դարձ-
յալ բազմել է գահակալ, սակայն ազգային
կյանքի այդ մեծախորհուրդ վարկյանն եր-
բեք այսքա՛ն ցնձության արտասուք չէր քա-
մած ազգիս աչքերից, այսպե՛ս սաստիկ չէր
ալեկոծած ազգի վշտատանջ կործբքը:

Իրա մեծ պատճառը ժողովրդասեր Հայրի-
կի մեծ անձնավորության մեջ է. ա՛յն Հայրի-
կի, որ անշուք խրճիթը չէ փոխել շքեղ պա-
լատի հետ, գլուղացու սև հացը—ամիրայի
սպիտակ հացի հետ... ա՛յն Հայրիկի, «որի
բոլոր կյանքն—ինչպես բանաստեղծն ասում
է—առաքինության ծաղիկների մի գեղեցիկ
շարք է, որով կարելի կլինե՛ր Երասխի նման
ոլորտն գոտի կապել հայրենյաց մեջքին»:

Երկի՛նք, երկա՛ր կյանք պարզկիր Վեհ
Ծերունուն, որ մեր կյանքի մույթ գիշերին
հաջորդե լույս ցերեկը, ցուրտ ձմրան—ջերմ
գարունը:

Ա. ԾԱՏՈՒՐՅԱՆ

(«Հայրիկը կաթողիկոս», «Հանդես»,
1893 թ., էջ I—IV)

* *

Օժտված՝ ճոխ և ուժեղ բնությամբ մը,
կրակոտ ու անկախ խառնվածքով մը, Մկրդ-
տիչ Խրիմյան, իր սատանության օրերեն
իսկ, ուսանելու անդամադրելի պետք մը
զգաց՝ շրջակա անկումներ վեր բարձրանալու
և իր շղթայակից եղբայրներուն բարձրաց-
ման նպատեղու համար:

...Այնուհետև, իր բոլոր ուժերով սկսավ աշխատել իր Հայաստանի հայրենակիցներուն մտավոր ու բարոյական վերականգնմանը, ջանաց մասնավորապես թոթվել թղթաբույրությունը որ կտիրեր վանքերուն մեջ, գրեթե բոլոր եկեղեցականներուն մոտ. հիշեցուց անոնց քաղաքակրթիչի ու դաստիարակչի դերը գործ կատարած էին անոնց փառավոր դերը, ջանաց հետևել նախահարց օրինակին, վանքերուն մեջ հիմնել դպրոցներ՝ հմուտ կղեր մը պատրաստելու համար, հանրային վարժարաններու. թիվը բազմապատկել և տալ անոնց անհրաժեշտ կատարելագործումները, ի վեր հանեց մասնավոր կարիքը աղջկանց վարժարաններ հիմնելու, ինչ որ բոլորովին կապակեր:

...Գրկաբաց ընդունվեցավ այնտեղ (Վ. Պոլիս): Իր համբավն արդեն մեծցած էր Պոլսո հայ գաղութին մեջ. հոն կգնահատեին իր այլքան լուսամիտ ուրբան կրակոտ հայրենասիրությունը, ուժն ու գեղեցկությունը իր նկարագրին, որուն բաղկացուցիչ տարրերն էին՝ խանդավառություն, անձնվիրություն, անշահախնդրություն և անսահման բարություն մը. իր երկու քերթվածները իրեն գրաված էին գրահմուտներուն համակրությունն ու հարգանքը. քարոզները գործ հաճախ արտասանեց քաղաքին բոլոր եկեղեցիներուն մեջ և գործ խոտնամբոխ կերթային ունկընդորել, կհրապարակեին, կհուզեին, կէլեկտրականացնեին ժողովուրդը. այդ քարոզները, որոնց մտերիմ ազդվությունը ոչ մեկ հայ քարոզիչ կրցած է հասնի, խավըռտուրքներ էին ավելի, պարզ, ինքնակ գնացքով մը, բնական ու թափանցող շեշտով մը. ուր սրտն քիսած արցունքներ՝ և որ կփոխանցվեին ունկընդորներուն՝ պարզուկ «հույս»-ի մը սիրուն ցայտքերուն կխառնվեին. մարդ կը կարծեր լսել նույն ինքն հոգին հիմնավորց հայրենիքին որ կխոսեր այդ անձնեղ ու գեղեցիկ եկեղեցականին քերտով:

...Ատեն մը գրական գործունեության մեջ ամփոփվեցավ, հաջորդաբար հրատարակեց հետևյալ երկերը, «Մարգարիտ արքայության երկնից», «Դրախտի ընտանիք», «Խաչի ճառ», «Սիրաք և Սամվել», «Պապիկ և Թոռնիկ» և այլն: Այս գործերեն—որ բոլորն ալ արդի հայերենով և արձակ գրված են—առաջինն մեջ, Ավետարանի գլխավոր պատկերները կընդլայնե և կմեկնե: «Դրախտի ընտանիք»-ը կպարունակե նկատողություններ ու խրատներ ամուսնական կյանքի, այր և կնոջ, զավակներու և ծնողաց փոխադարձ պարտականությանց վրա: «Խաչի ճառ»-ը տեսակ մը արձակ քերթված է, որ հաճախ կելլե մինչև բարձր քննադատություն մը, երգելով ու մեկնաբանելով Քրիստոսի

չարչարանքը: «Սիրաք և Սամվել»-ը խրատներու շարք մըն է՝ երիտասարդներու ուղղված՝ բնական և ընկերական օրենքներու, մարդկային արայմաններու անհավասարության, հառաջդիմության, ազգերու զարգացման և անկման, «հանճարի դուստր, ու հառաջդիմության մայր» գիտության մասին:

«Պապիկ և Թոռնիկ»-ը գմայլելի գիրք մըն է որ հուզված վրձինով մը կնկարե հայ գյուղացիներու կյանքը, բարքը, աշխատանքը, սովորությունները, հանդեսները, և դեռատի գեղջուկներուն խրատներ կու տա իրենց սիրցնելու համար դաշտերու պարզ ու առողջ կյանքը, անոնց բացատրելու համար ինչ որ կա գեղեցիկ ու հավիտենական՝ հայրենի ավանդությանց մեջ, և հորդորելու համար զանոնք որ առաքինության և հառաջդիմության ճամբեն ընթանան:

...Խրիմյան երբեք չէ ձգտած դեպի գուտ արվեստը. գրականությունը իրեն համար, ամեն բանն առաջ՝ գործունեության միջոց մը եղած է. բայց իր մեջ կա ճշմարիտ բանաստեղծ մը... բանաստեղծ մը քնքուշ ու տաք զգայությամբ, բնական ու պարզ ներշնչմամբ, որ ինքզինքը կարտահայտե ոճով մը համեղ, քնարեզոությամբ ու սրամտությամբ լեցուն, մերթ հզոր, միշտ տոգորված՝ տոհմային շեշտված նկարագրով մը:


...Այնտեղ, Հայաստանի սրբավայրին՝ Էջմիածնա՝ դարավոր հովանյաց տակ, մարդ մը կա որուն կյանքը մեծ եղավ ժամանակակից պատմության ամենն ողբերգական ու ամենն բարձրորեն գեղեցիկ կյանքերեն: Դեռ կանգուն՝ անխոց կորովով մը, հակառակ իր անհուն ցավերով ծանրացած ուսուցանվեց տարիներուն բեռանը, Ն. Վ. Մկրտչի և, հայ եկեղեցվո Հայրապետ, ժողովորդական պետի իր դերը կշարունակե կատարել:

ԱՐՇԱԿ ԶՈՊԱՆՅԱՆ
(«Դեմքեր», «Խրիմյան Հայրիկ»-ից
հատվածներ)

• • •

Խրիմյան իդեալական բարձրատիճան եկեղեցականն է. անոր դեմքը շեշտակի դուրս կցայտե Հին Կտակարանն, իր բովանդակ հորքովը և բանաստեղծականությամբը: Իր օծման արարողության միջոցին այնպես չըլ՝ացավ ինձի, թե Արարատի ստորոտը ճնամենի ոգին տակավին արթուն կմնար: ...Այս մարդուն ամբողջական նկարագիրը կարծես թե ավելի կաղապարված է տիպարի մը վրա, քան թե քրիստոնեական նվիրապետության: ...Իրեն համար կրոնք և հայրենասիրություն գրեթե համարժեք բառեր են:

...Այս նշանավոր մարդուն հետ քով-քովի մտերմական այնպիսի հարաբերություն մը



ԱՐԾՈՒՒ ՎԱՍԳՈՒՐԱԿԱՆ

ԹՌՈՒՑԵԱԼ ՀԱՅՐԵՆԱՍԷՐ ԹԵՒՕՔ
ՅԱՐԾՐՈՒՆԻ ՄԵՆԱՍՏԱՆԷՆ ՎԱՐԱԳԱՅ

ԽՄԲԱԳԻՐ ՀԱՅՐԵՆԱԽՕՍ
(ՄԿՐՏԻՉ ՎԱՐԴԱՊԵՏ ԽՐԻՄԵԱՆ)

1860

ՀԱՏՈՐ ՉՈՐՐՈՐԴ

ԹԻՒ Բ.

ՎԱՆՏՈՍՊ

Ն ՅԱՐԱՆԻ ՎԱՍԳՈՒՐԱԿԱՆ ԱՐԾՈՒՑՅՈՒՆ

Ի ՎԱՐԱԳ

«ԱՐՄԵՆԻ ՎԱՍԳՈՒՐԱԿԱՆ» Ամսագիր (Ի-Վ-Ն ՏԵՂ-ԲԵՐԷ)
ԹԻՒՄԻ ԲՈՒՆ ԾԱՌԱՅՐ 15X21 ՆԱԽԻՐԱՊԵՏԱԿԱՆ

ունեցա, որ անակնկալ մը եղաւ ինձի համար, ու այսպէս, Էջմիածնի մէջ և հաջորդ ուղևորությանս ընթացքին կրցա մոտեն ծանոթանալ Խրիմյանի կյանքին:

Հանգստավետ օրվան մը հաջորդող առտուն, հրապեր ստացա այցելել Նորին Արքեպիսկոպոսին: Երբ մենք Արարատի վրա էինք, անհիկա վանք հասած էր, և այնպէս կերևար, թէ չէր կրցած սենյակեն դուրս ելլել, որովհետև իր վրա հիացող գեղացիները շուրջը կիսոնկէին ամեն անգամ որ դուրս ելլէր: Մինչև իսկ պարտեզը պաշարված էր գեղացիներէն, որոնք ժամերով կապասէին իրենց Հայրիկինն անվաճքին արժանանալու համար:

...Անհիկա աշխարհի ամենէն նրբամիտ մարդն է, որ ձեզի կդատե իր խելացի աչքերուն մեկ նայվածքովը: Չեմ հիշեր տեսած ըլլալ ավելի սիրուն և գրավիչ դեմք մը. հանուքի սարսուռ մը ունեցա մտածելով, որ անոր քովը նստած եմ և կտեսնեմ ժպիտը, անտարակույս իր դիմագծին սովորական եղող այդ ժպիտը, որ կթրթուար իր վնիւտ և թուխ աչքերուն շուրջը: Չայնն ալ շատ քաղցր էր, իսկ վարվելակերպը լեցուն էր մեծանձնությամբ, որուն ետին կզգար, թէ ուժ կա:

...Չեմ հիշեր տեսած ըլլալ ավելի սիրուն և գրավիչ դեմք մը, որուն յուրաքանչյուր գի-

ծին վրա գրված է մտացիություն և նրբություն: Խրիմյանը երկար տարիներ եղած է Հայկական շարժումին հառաջապահը: Այն դատը գործիմյանը կապաշտպաներ, ամենն արդարն էր դատերուն:

Հ. Ֆ. Պ. ԼԻՆԶ
(«Արմենիա», հատոր Ա.)

* *

Խրիմյանի համար չկար ոչ իշխան, ոչ ծառա, ոչ հարուստ, ոչ ալ աղքատ. ամենքը միևնույն արժեքն ունէին նրա աչքում: Այդ տեսակետից նա կատարյալ բանաստեղծ էր: Միայն մի բանի առաջ էր խոնարհվում նրա անկախ և հպարտ հոգին— ժողովրդի:

ՇԻՐՎԱՆԶԱՐԵ

* *

Պապիկ և Թոռնիկ ՀԱՅՈՑ հայրենիքին տիրական խորհրդանիստ աշխարհն է:

Ես չեմ կարդացած որևէ գրականության մէջ էջ մը այնքան իրաւ, մարդկային, սրբաւորույ, որքան Պապիկին խոսակցության մեկ մասը մահվան հրեշտակին հետ, որ անհիկա արքայության դաշտերէն իրեն բաւող վարեղահող կապահանջէ: Ասիկա գիրքերու վսեմն է ահա:

Հ. ՕՇԱԿԱՆ





ՀԱՅՈՑ ՀԱՅՐԻԿ